ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ N 48 -Ա

04ՓԵՏՐՎԱՐ 2022Թ

«ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆ ԱՎԵՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 216-րդ հոդվածի, 218-րդ հոդվածի 1-ին մասի, 220-րդ հոդվածի 1-ին մասի, 222-րդ հոդվածի, 223-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 224-րդ և 226-րդ հոդվածների, 227-րդ հոդվածի 1-ին մասի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 13-րդ հոդվածի 1-մասի 4-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով «ՀՀ Վայոց ձորի մարզի «Արենիի միջնակարգ դպրոց պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության 48-րդ կետի 21-րդ ենթակետը, պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր մարմնի հետ 2018 թվականի օգոստոսի 1-ին կնքված թիվ 390 աշխատանքային պայմանագրի 2.2-րդ կետի «դ» ենթակետը և հաշվի առնելով Ա. Հայրապետյանի 11.01.2022թ. գրավոր բացատրությունը, հարուցված կարգապահական վարույթի շրջանակում տրված լրացուցիչ պարզաբանումը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի սեպտեմբերի 8-ի թիվ 28-Ն հրամանով հաստատված հավելվածի 6-րդ կետի պահանջները ոչ պատշաճ կատարելու համար «ՀՀ Վայոց ձորի մարզի Արենիի միջնակարգ դպրոց պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ-ի տնօրեն Ավետ Հայրապետյանին ենթարկել կարգապահական պատասխանատվության՝ կիրառելով «նկատողություն» կարգապահական տույժը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգով Ա. Հայրապետյանին ծանուցելու հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում:

2/4/2022

X

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Подписано: GRIGORYAN ARARAT 1310850550

Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ

ք. Եղեգնաձոր